

## ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԷՆ

**31 Յուլիս - 8 Օգոստոսին** գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդը դարձեալ կազմակերպած էր Ամառնային արձակուրդներու մանկական Ճամբար մը, որ րեղի ունեցաւ Steineberg կոչուած գեղատեսիլ վայրի մը մէջ, եւ որուն այս փարի մասնակցեցան 8-15 փարեկան աւելի քան 30 մանուկներ ու պատանիներ: Ճամբարին հիմնական նպատակն է՝ փարին գոնէ անգամ մը կարելիութիւնը ստեղծել, որպէսզի Գերմանիոյ պէս ցրուած գաղութին մէջ ապրող հայ երեխաներ մէկտեղուին եւ հաւաքաբար սորվին հայերէն լեզուն եւ հայ պատմութիւնը, հայկական երգն ու պարը, սպանան հայեցի դաստիարակութիւն: Կը կազմակերպուին նաեւ այլազան խաղեր եւ մարզական մրցոյթներ:

Կազմակերպիչներու գովելի ու գնահատելի փափագին ընդառաջելով Գերմանիոյ հայոց Առաջնորդարանի կողմէ երեխաներու համար կազմակերպուեցան նաեւ կրօնքի եւ Հայ Եկեղեցոյ պատմութեան ամէնօրեայ դասընթացքներ, ինչպէս նաեւ արարողութիւններ: Առաջնորդարանի նախաձեռնութեամբ եւ Սերովբէ վարդապետ Իսախանեանի ջանքերով պարտապարտեցան երկու նկարազարդ գրքոյկներ՝ հայերէն եւ գերմաներէն լեզուներով, «Ճանչնանք մեր Եկեղեցին» եւ «Քրիստոնէական Եկեղեցիներու փարբերութիւնները» բովանդակութեամբ, որ բաժնուեցան մասնակից բոլոր երեխաներուն:

Ամէնօրեայ դասընթացքներու կազմակերպումին Սերովբէ Հայր Սուրբի կողքին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Մայր Աթոռի միաբաններ՝ Արշէն եւ Յովնան, ինչպէս նաեւ Գարեգին Հայր Սուրբերը:

**21 Մեպտեմբերին** Գերմանիոյ Զաքարն-Անհալթ նահանգի Մակպրէպուրկ քաղաքին մէջ, Երեւանի Սէրէնապ համոյթի համերգով բացումը կատարուեցաւ «Հայկական Մշակոյթի Օրերուն», որոնք պիտի տեսն մինչեւ 5 Նոյեմբեր:

«Մշակոյթի Օրերուն» հովանաւորութիւնը ստանձնած է Մակպրէպուրկի քաղաքապետը՝ Տոքթ. Լուց Թրիմբեր: Իսկ բացումը կատարուեցաւ ՀՀ Մշակոյթի նախարար Յովիկ Յովէյնանի, ՀՀ Գերմանիոյ դեսպան Տիկին Կարինէ Ղազինեանի, ինչպէս նաեւ Զաքարն-Անհալթ նահանգի Մշակոյթի նախարար Փրոֆ. Տոքթ. Եան-Նենրիք Օլպերցի կողմէ, որոնցմէ իրաքանչիւրը հանդէս եկաւ՝ ընդգծելով Հայկական Մշակոյթի Օրերուն կարեւորութիւնն ու Հայաստանի հետ այս նահանգին արդէն գոյութիւն ունեցող համագործակցութիւնը: Նկատի առնելով, որ 21 Մեպտեմբերը կը զուգադիպէր ՀՀ Անկախութեան 13րդ փարեղարձին, յարգարժան բանախօսները անդրադարձան նաեւ Հայաստանի պատմութեան, շնորհաւորեցին անկախութեան փօսն ու կատարեցին բարենախօսութիւններ երկրի բարօրութեան ու զարգացման համար:

Այս սկսաւ Սէրէնապ համոյթի համերգը՝ Էրուարտ Թօփչեանի ղեկավարութեամբ, որ անգամ մը եւս հմայեց Եռհաննիս եկեղեցոյ մէջ համախմբուած բազմաաւարի ներկաները՝ ներկայացնելով Չայթովսկիէ, Էրուարտ Միրզոյեանէ եւ Դաիթ Հալաճեանէ ընտրեալ երաժշտական կտորներ:



Պետական ներկայացուցիչներու, գերմանացի ու հայ ունկնդիրներու շարքին ներկայ էր նաեւ թեմիս առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքեան, որ յարկապէս հրաիքուած ըլլալով «Մշակոյթի Օրերու» բացման այս հանդէսին, իր կարգին շնորհատրեց կազմակերպիչներն ու ՏՏ անկախութեան օրը՝ կարարելով սրտաբուխ մաղթանքներ:

ՏՏ Անկախութեան Տօնին առթիւ կազմակերպուած հանդիսութիւնները շարունակուեցան ՏՏ Գերմանիոյ Դեսպանութեան կողմէ, այս անգամ Պէտլիի մէջ փեղի ունեցած նկարչական ցուցահանդէսով, որուն առաջնորդ Սրբազանը ես մասնակցեցաւ՝ իր կողքին ունեւնալով շրջանի հոգեւոր հովիւ Նոզ. Տ. Սերովբէ վոյ. Իսախանեանը: Պէտլիի International Club-ի շքեղ սրահներուն մէջ ցուցադրուեցան ՎԱՄԱՐ-ի (Վարդիա Մարտիրոսեան) հիւացում ազդող նկարները, որոնք ներկայ բազմութեան կողմէ մեծազոյն գնահատանքի արժանացան: Պէտլի է ըսել, որ ՏՏ Գերմանիոյ դեսպանուհի Տիկին Կարինէ Ղազինեան ձեռնհասօրէն ուշադրութիւն դարձուցած էր ցուցահանդէսի կազմակերպման, որուն աննախընթաց բազմութիւն մը ներկայ եղած էր: Մասնակիցներու մեծամասնութիւնը պետական շրջանակի ներկայացուցիչներն ու փարբեր երկիրներու վարժապետներն աւելի դեսպաններն էին՝ իրենց փիլիսոփայութիւնը: Չէին բացակայած եկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչները եւս, որոնց շարքին նաեւ՝ Գերմանիոյ մէջ պապական նոր նուիրակը:

**15 Նոկտեմբերին** յարուկ կազմակերպուած հանդիսութեան ընթացքին Սրբազանը Նայոց Եկեղեցոյ «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանը յանձնեց Տոբթ. Բալֆ Ճորպանոյին, որ Գերմանիոյ մէջ հանրածանօթ է իր նկարահանած ֆիլմերով:

Ճորպանուն 1986ին նաեւ Նայոց ցեղասպանութեան մասին ֆիլմ մը պատրաստած էր, որ Գերմանիոյ մէջ բաւական աղմուկ բարձրացուց:

Հանդիսութեան բացումը կարարեց Առաջնորդարանի Մշակութային յանձնախումբի արեւնապետ Ճորճի Պակայ, որմէ ետք Տոբթ. Միհրան Տապաղ ներկայացուց Ճորպանոյի կենսագրութիւնն ու իր հանրային աշխատանքները: Հանդիսութիւնը շարունակուեցաւ ջութակահար Սուզաննա Կրէկորեանի եւ դաշնակահարուհի Ունանեանի դասական ու հայկական երաժշտութենէ կտորներով, որոնք ներկայ բազմութեան ջերմ գնահատանքին արժանացան:

Յայտագրի աւարտին Գերաշնորհ Սրբազանը յանձնեց շքանշանն ու Վեհափառ Նայրապետի սրբաբառ կոնդակը՝ յանուն գերմանահայութեան յայտնելով իր երախտագիտութիւնը յարգելի Ճորպանոյին, ի գնահատութիւն Նայ ժողովուրդին ի նպաստ իր փարած աշխատանքներուն:

**21-22 Նոկտեմբերին** Վիեննայի մէջ «Փոօ-Օրիենթ» կազմակերպութեան ջանքերով փեղի ունեցաւ աստուածաբանական գիտաժողով՝ «Եվրոպա, մի՛ մոռնար քո նահապակները» խորագրով: Զեկուցողները Գերմանիոյ փարբեր յարանուանութիւններու ներկայացուցիչներ էին՝ Ուղղափառ, Կաթոլիկ, Անտարանական Եկեղեցիներէն եւ երկական համայնքէն: Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիները ներկայացնելու համար հրաւեր էր ուղղուած Նայոց Առաջնորդարանին, որը սրանձնեց Նոզեշնորհ Տ. Գարեգին արք. Յարութիւնեանը: Զեկուցողները անդրադարձան նահապակութեան գաղափարի աստուածաբանական վերլու-



ծութեանը՝ ներկայացնելով նաև իրենց Եկեղեցոյ պարմութեան մէջ այս մասին արձանագրուած մասնաւոր յիշարակութիւնները: Գիտաժողովին ներկայ էին Վիէնայի համալսարանի դասախօսներ, հոգեւորականներ, ուսանողներ եւ լրագրողներ, որոնք իրենց հետաքրքիր հարցումներով սրեղծեցին բովանդակալից բնարկումներ նիւթին շուրջ: Գիտաժողովի աւարտին բոլոր մասնակիցներն այցելեցին Վիէնայի կեդրոնական դարարան, ուր Բ. Աշխարհամարտի ժամանակ րեղի իշխանութեան կողմէ հարիրաւոր մարդիկ մահապարժի էին ենթարկուած: Ի յիշարակ բոլոր նահապակներու՝ կարարուեցաւ հոգեհանգրստեան պաշտօն:

**31 Նոկտեմբերին** Գերմանիոյ Մայնց քաղաքի Ռայնկոլպ սրահին մէջ րեղի ունեցաւ Շրջակայ Միջավայրի Պահպանութեան Գերմանական մրցանակի (Umweltpreis) րըւչութեան հանդիսութիւնը: Այս րարի վերոյիշեալ մրցանակին եւ դրամական պարգեւին արժանացան երկու գիտնականներ, որոնցմէ մեկն էր Փրոֆ. Տոքթ. Կարապետ Անդրանիկեան, որ Նամպուրկ-Նարպուրկ Մասնագիտական Նամալսարանի Թէքնիք Մանրեագիտութեան բաժնի ղեկավարն է: Իր համալսարանական աշխարանքի կողքին Տիար Անդրանիկեանը արենապետն է International Society for Extremophiles հասարարութեան եւ ունի զանազան ուրիշ գիտական աստիճաններ եւ մինչ հիմա հրարարակաժ է բազմաթիւ մասնագիտական յոյուաժներ:

Տիար Անդրանիկեան ժնաժ է 1951ին Յորդանանի Ամման քաղաքին մէջ, ուսանաժ Պէրոթի Ամերիկեան Նամալսարանի եւ Գերմանիոյ Կեոթինկէն քաղաքի Կեորկ-Ակուսթ Նամալսարանի մէջ: Փրոֆ. Անդրանիկեանը Մրցանակը սրացաւ Գերմանիոյ Նախագահ Նորսթ Զէօիլերի ժեոքէն:

Պերական եւ գիտական շրջանակներէն ներկաներու կողքին րըւչութեան արարողութեան մասնակցեցան նաև թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պերժեան եւ ՆՆ Գերմանիոյ Դեսպանուի Տիկին Կարինէ Ղազինեան:

ԴԻԲՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ